ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 5-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Հոդված 204. Վարչական դատարան դիմելը և հայցադիմումների քննության ժամկետները

1. Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների դեմ կարող է հայց ներկայացվել դատարան որոշումն ուժի մեջ մտնելուց կամ հավաքի մասին իրազեկումն ի գիտություն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ~~իսկ եթե որոշումը կայացվել է, կամ հավաքի մասին իրազեկումն ի գիտություն ընդունվել է իրազեկման մեջ նշված հավաքի օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ՝ 24 ժամվա ընթացքում~~ **բայց ոչ ուշ, քան հավաքի սկզբից 36 ժամ առաջ** :

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում ներկայացված հայցադիմումներն ընդունվում են վարույթ վարչական դատարան մուտքագրվելու օրը և քննվում են 2 օրացուցային օրվա ընթացքում**, բայց ոչ ուշ, քան հավաքի սկզբից 12 ժամ առաջ** :

~~3. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված ժամկետների վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա հայցը ներկայացվում է դատարան, կամ դատական ակտը կայացվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:~~